ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XIV ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

2009թ. հոկտեմբերի 1-3-ը Երեւանում անցկացվեց Երեւանյան միջազգային XIV **խորհրդաժողովը:**

Կազմակերպիչներ՝

ՀՀ Սահմանադրական դատարան

ՀՀ Ազգային ժողով

Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով Եվրոպական Հանձնաժողով (Վենետիկի Հանձնաժողով)

Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս

Մասնակցությամբ՝ «Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության»

Աջակցությամբ՝ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության երեւանյան գրասենյակի

XIV խորհրդաժողովի խորագիրն էր՝ «***Սահմանադրության գերակայության երաշխավորման գործում ՍԴ-ների եւ խորհրդարանների գործակցության միջազգային փորձը***»

Ամենամյա երեւանյան միջազգային խորհրդաժողովների կազմակերպման ու անցկացման ավանդույթը սկզբնավորվել է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից՝ Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով Եվրոպական Հանձնաժողովի (Վենետիկի Հանձնաժողով) հետ համատեղ, սկսած 1966 թվականից:

[1.10.2009] Առաջին օր. Հանդիպումներ, ծանոթություններ

Մշակութային ծրագրերի շրջանակում հյուրերի համար կազմակերպվեցին այցելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մատենադարան, Ազգային պատկերասրահ, Զվարթնոց տաճար:

Երեկոյան «Անի Պլազա» հյուրանոցում կայացավ խորհրդաժողովի մասնակիցների ընդունելություն-հանդիպումը: Սա ավանդական միջոցառում է, որ կազմակերպում է ՀՀ սահնամադրական դատարանը: Մասնակիցներից շատերը մի շարք անգամներ մասնակցել են նման խորհրդաժողովների, ոմանք էլ առաջին անգամն էին Հայաստանում, եւ այդ երեկոյան ընդունելությանը հնարավորություն ստացան հանդիպել, ծանոթանալ միմյանց հետ:

[2.10.2009] Խորհրդաժողովի բացումը. ողջույններ, զեկուցումներ, քննարկումներ

ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում խորհրդաժողովը սկսեց իր աշխատանքը:

Բացման խոսքերով հանդես եկան՝

ՀՀ Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանը,** ՀՀ ՍԴ նախագահ **Գագիկ Հարությունյանը,** Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար **Ջիանի Բուքիքիոն:**

Հրապարակվեց **ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի** ողջույնի խոսքը:

Խորհրդաժողովի օրվա թեման էր՝ «***Սահմանադրության գերակայության ապահովումը որպես իրավական պետությունում սահմանադրական կայունության հիմնական երաշխիք***»

Նիստը նախագահում էր Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար **Ջիանի Բուքիքիոն:**

Առաջին նիստում զեկուցումներով հանդես եկան՝ Բելգիայի Սենատի նախագահ **Արման Դը Դեկերը,** Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր, պալատի նախագահ **Ժոզեփ Կասադեվալը**, ՀՀ ՍԴ նախագահ **Գագիկ Հարությունյանը,** Վրաստանի ՍԴ նախագահ **Գեորգ Պապուաշվիլին:**

Զեկուցումների շուրջ եղան հարց ու պատասխաններ, թեմաների քննարկումներ:

Նիստի առաջին ընդմիջմանը կայացավ ՀՀ ՍԴ նախագահ **Գ. Հարությունյանի ճեպազրույցը:**

Կարճ ընդմիջումից հետո շարունակվեցին զեկուցումները: Հանդես եկան՝ Լեհաստանի Սենատի հանձնաժողովի նախագահ **Պիոտր Զիենտարսկին**, Տաջիկստանի ՍԴ նախագահ **Մախկամ Մախմուդովը**, Բելառուսի ՍԴ նախագահ **Պյոտր Միկլաշեւիչը**, Չեխիայի պատգամավորների պալատի հանձնաժողովի անդամ **Եվա Դունդաչկովան**, Ուկրաինայի ՍԴ դատավոր **Պետրո Ստեցյուկը:** Զեկուցումների շուրջ եղան հարց ու պատասխաններ, թեմաների քննարկումներ:

2-րդ նիստի թեման էր՝ «***Արդյունավետ սահմանադրական վերահսկողության իրականացման պառլամենտական երաշխիքները***»

Նիստը նախագահում էր ՀՀ ՍԴ նախագա
հ **Գագիկ Հարությունյանը:**

Զեկուցումներով հանդես եկան՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ **Արեւիկ Պետրոսյանը** , Լիտվայի ՍԴ դատավոր **Պրանաս Կուցոնիսը,** Ռումինիայի ՍԴ նախագահ **Վալենտին Պուշկաշ Զոլտանը,** Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր **Պավլե Կուբլաշվիլին,** Լատվիայի ՍԴ նախագահ **Գունար Կուտրիսը,** Անդորայի ՍԴ անդամ **Միգել Հերերո Դե Մինյոն,** Բելառուսի խորհրդարանի մշտական հանձնաժողովի նախագահ **Եվգենի Սմիռնովը,** Ղազախստանի Խորհրդարանի Սենատի անդամ **Իռան Ամիրովը:**

Երկրորդ նիստի ավարտին խորհրդաժողովը քննարկեց Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի ներկայացուցիչների մասնակցությամբ Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի կանոնադրության նախագիծը:

[3.10.2009] Վերջին օր. զեկուցումներ, քննարկումներ, խորհրդաժողովի աշխատանքների ամփոփում

Հոկտեմբերի 3-ին խորհրդաժողովը շարունակեց աշխատանքը: Օրվա թեման էր՝ «***Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես իրավունքի աղբյուր, դրանց դերն օրենքի բացի հաղթահարման գործում***»

Նիստը նախագահում էր Բելգիայի ներկայացուցիչների պալատի փոխնախագահ **Միա Դը Սխամֆելաերեն:**

Զեկուցումներով հանդես եկան՝ Ռուսաստանի ՍԴ փոխնախագահ **Օլգա Խոխրյակովան,** Մոլդովայի ՍԴ նախագահ **Դումիտրու Պուլբերեն,** Էստոնիայի ԳԴ դատավոր **Պրիիտ Պիկամաեն,** Ալբանիայի ՍԴ դատավոր **Ադմիր Տհանզան,** Նիդերլանդների ԳԴ դատավոր **Օսկար Դե Սավորնին Լոհմանը:**

Նիստի առաջին ընդմիջմանը կայացավ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար **Ջիանի Բուքիքիոյի մամուլի ասուլիսը:**

Նախորդ օրը նա պարգեւատրվել էր Հայաստանի Հանրապետության Պատվո շքանշանով՝ Հայաստանի եվրոպական ինտեգրմանը նպաստելու եւ ՀՀ-ում իրավական բարեփոխումների իրականացման գործում ունեցած ծառայությունների համար:

Խորհրդաժողովում շարունակվեցին զեկուցումները: Հանդես եկան՝ Ալժիրի ՍԽ դատավոր **Դինե Բենդջեբարան,** Մակեդոնիայի ՍԴ դատավոր **Նատաշա Գաբեր-Դամյանովսկան,** ՀՀ ՍԴ անդամ **Ֆելիքս Թոխյանը,** Բուլղարիայի ՍԴ դատավոր **Վասիլ Գոցեւը,** Ղրղզստանի ՍԴ դատավոր **Աբիբուլա Աբդուգապառովը:**

Զեկուցումների շուրջ եղան հարց ու պատասխաններ, թեմաների քննարկումներ:

4-րդ նիստի թեման էր՝ «***Խորհրդարանների եւ սահմանադրական դատարանների գործառնական փոխհարաբերությունների զարգացման եվրոպական արդի միտումները***»:

Զեկուցումներով հանդես եկան՝ Բելգիայի ներկայացուցիչների պալատի փոխնախագահ **Միա Դը Սխամֆելաերեն,** Սերբիայի ԱԺ վարչական հանձնաժողովի նախագահ **Նենադ Կոնստանտինովիչը,** Նորվեգիայի ԳԴ դատավոր **Կարին Բրուցելիուսը,** Բոսնիայի եւ Հերցոգովինայի ՍԴ փոխնախագահ **Վալերիա Գալիչը:**

Զեկուցումների շուրջ եղած հարց ու պատասխաններից, թեմաների քննարկումներից հետո նախագահողների կողմից կատարվեց **քննարկումների արդյունքների ամփոփում:**

Խորհրդաժողովի պաշտոնական լեզուներն էին՝ հայերենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը:

ՀՀ ՍԴ մամուլի ծառայություն